քարոզող միսիոնարները ատելութիւն եւ թշնամութիւն էին սերմանում երկու հայ եղբայրների մէջ:

— Միսիոնարը ազգ չէ ճանաչում, — շարունակեց Սագօն, — նա մտնում է մի ժողովրդի մէջ, տեսնում է՝ ինչ լեզուով որ խօսում է ժողովուրդը, եւ ինչ լեզուով որ սրան աւելի հասկանալի է, սկսում է նոյն լեզուով քարոզել նրան եւ նոյն լեզուով կարդացնում է նրա զաւակներին իր դպրոցների մէջ: Եթէ մի տեղ հայը քրդերէն է խօսում, նա կսկսէ նրան քրդերէն քարոզել, եթէ թուրքերէն է խօսում, կսկսէ թուրքերէն քարոզել: Նրան ի՞նչ փոյթ, որ այդ լեզուները հայոց մայրենի լեզուն չեն: Նա երբեք յանձն չի առնի մի այդպիսի դժուարութիւն, որ նախ հային իր կորցրած մայրենի լեզուն սովորացնէ եւ յետոյ սկսէ նոյն լեզուով քարոզել նրան: Եւ ձեր ընկերութեան աշխատութիւնը այդ կողմից շատ օգտակար պէտք է համարել, որ յանձն է առել մայրենի լեզուն տարածել քրդախօս հայերի մէջ: Դա աւելի ուղիղ ճանապարհ է նրանց հայեացնելու եւ հայութեան մէջ պահելու համար: Լեզոի հետ կապուած է ազգի գրականութիւնը, նրա անցեալը, նրա պատմական կեանքը, նրա բոլոր մտաւոր եւ հոգեկան արտայայտութիւնները դարերի ընթացքում, նրա ամբողջ գոյութիւնը, այդ է, որ կապում է մի անհատին իր ազգային ամբողջութեան հետ: Իսկ եկեղեցին, ինչպէս տեսաք իմ բերած օրինակներից հարաւային Սիջագէտքի հայերի վերաբերութեամբ, շատ թոյլ կապ է հային իր ազգայնութեան հետ կապելու համար, եթէ նա կորցրել է միւս, աւելի հաստատուն հիմունքները ազգայնութեան:

Ես Սագօյի մէջ այժմ ուրիշ մարդ, ուրիշ լեզու էի տեսնում. նա այն չէր, որ առաջին անգամ հանդիպեց ինձ արաբական մինարեթում եւ ոչ այն զարհուրելի խեղկատակն էր, որ ձանձրացնում էր ինձ որսորդի տան մէջ: Նրա մէջ խօսում էր Ասլանի լեզուն: Ես զարմանում էի, որքան նման էին այդ երիտասարդները միմեանց թէ՛ իրանց ձգտումներով եւ թէ՛ գաղափարներով:

— Ես համաձայն եմ ձեզ հետ, — ասաց միւս երիտասարդը, որ բոլոր ժամանակ լուռ էր: — Բայց օտարազգի քարոզիչները այդ բոլոր վնասները չէին կարող տալ մեզ, եթէ մենք ունենայինք օրինաւոր եկեղեցականներ: Եթէ գայլը հօտից ոչխարներ է գողանում, դա ապացոյց է, որ հովիւներն ու շները անպիտան են: Մեր քահանաները տգէտ են եւ անկիրթ, իսկ մեր վարդապետները, իրանց վանքերի մէջ առանձնացած, ճգնում են, աղօթում են, կարծելով թէ դրանով մեծ ծառայութիւն են անում ազգին:

Այդ միջոցին մեր սեղանի մօտից անցաւ մի մարդ, եւ խօսակցութիւնը իսկոյն դադարեց: Նոյն ներգործութիւնն էր անում նա, ինչ խմբի որ մօտե-